

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ԺԱՆՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈՆՄՆԵՐԻ  
ՊՈՆՏԻԿԱՅՈՒՄ**

*Բանալի բառեր – Վահագն Դավթյան, Մովսես Խորենացի, Մովսիկ, հիշատակարան, պոեմ, գրիչ, միջնադար, ոճավորում, նետողաց ազգ, ձեռագիր*

1980-ական թթ. Վահագն Դավթյանը ստեղծագործական չմարող եռանդով շարունակում էր զբաղվել ոչ միայն հայոց հնագույն պատմության և վաղնջական պոեզիայի, այլև միջնադարյան հայ հոգևոր մշակույթի գեղարվեստականացմամբ: 1960-ական թթ. ստեղծված «Զվարթնոց» ասք-պոեմից և «Թոնդրակեցիներ» քնարավիպական համադրական պոեմի վերջնական խմբագրումից շուրջ երկու տասնամյակ անց նա գրում և 1987 թ. լույս տեսած «Անքնություն» ժողովածուում հրատարակում է իր պոեզիայի միջնադարական գիծը և պատմամշակութային թեքումը վերստին կենդանացնող ևս երկու՝ «Հիշատակարան անանուն գրչի» և «Մովսիկ» պոեմներ:

«Հիշատակարան անանուն գրչի» պոեմը շարունակում է հայ միջնադարյան ձեռագիր մատյանների և գրիչների թեման, որը մեր գրականության մեջ առավել ցայտուն մարմնավորում էր ստացել երկու արձակագիրների գործերում՝ Դերենիկ Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» (1935) պատմվածքում և Վ. Դավթյանի ժամանակակցի՝ Վիգեն Խեչումյանի «Զվարթնոց» (1945) ու «Գիրք պանդխտության» (1959) ժողովածուների պատմվածքներում և «Գիրք լինելության» (1966) վեպում: Ճիշտ է, «միջնադարականության» բավական արտահայտիչ միտում կար նաև XX դարի առաջին կեսի հայ պոեզիայում (Վահան Տերյանի «Տեսա երազ մի վառ» բանաստեղծությունը, Դ. Դեմիրճյանի՝ 1920 թ. հրատարակած «Գարուն» տաղերի գրքույկը, Եղիշե Չարենցի «Տաղարան» ու «Տաղեր և խորհուրդներ» շարքերը): Սակայն, որոշակիորեն շարունակելով նաև այդ հեղինակների ավանդույթը, Վ. Դավթյանը առավել կենտրոնանում է հենց մագաղաթների և գրչության մոտիվների վրա, ստեղծում միջնադարյան վանքերում մատյաններ ընդօրինակող գրիչների և ծաղկողների կերպարներ՝ ընդհանրության մեջ ավանդությանին նոր որակ ստեղծելով և հատկապես պոեմի ժանրով այն տեղափոխելով XX դարի երկրորդ կես:

Դ. Դեմիրճյանի և Վ. Խեչումյանի փորձի հետ Վ. Դավթյանի ստեղծագործական որոնումների հարազատությունը հստակ երևում է արդեն իսկ բնագրերում: Բայց հետաքրքիր է, որ բանաստեղծը այդ առնչությունը հաստա-

տում է նաև տեսականորեն: Պոեմների ստեղծման ժամանակաշրջանում տված նշանավոր հարցազրույցում նա դիտարկում է, որ մեր պատմավիպասանությունը «հիմնականում արքաների, իշխանների, լեգենդացած հերոսների մասին լինելով, իր տեսադաշտից բաց է թողել պատմության, այսպես ասած, հասարակ, անանուն մարդկանց: Առաջինը Դ. Դեմիրճյանն էր, որ խախտելով ավանդույթը, իր «Գիրք ծաղկանց» հրաշալի պատմվածքով պատմական ստեղծագործության հերոս դարձրեց հասարակ մարդուն, դրա հետ գրականությունն բերելով անցյալի կենցաղը: Այդ ուղղությանը հետևեց Վիգեն Խեչումյանը, մի հիանալի արվեստագետ, որի համար բավական էր ձեռագիր մատյաններից մեկի լուսանցքում կարդալ անանուն գրչի ձեռքով իմիջիայլոց գրված մի նախադասություն. «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր», որպեսզի շարժման մեջ դներ երևակայությունը և ստեղծեր պատմական հավաստի գործ»<sup>1</sup>:

Մեջբերված հատվածում կա փաստական անճշտություն: Իրականում «Հաղբատի ավետարանում» Շերանիկի մանրանկարի կողքին ավելացված կարճ նախադասությունը գրել է ոչ թե «անանուն գրիչը», այլ մանրանկարի հեղինակը՝ ծաղկող Մարգարեն<sup>2</sup>:

Այնուհանդերձ, Վ. Դավթյանի կողմից այդ դրվագի հիշատակությունը բնավ պատահական չէ: Դ. Դեմիրճյանի և Վ. Խեչումյանի մատնանշված ուղղության շարունակությունը առավելապես արտահայտված է «Հիշատակարան անանուն գրչի» պոեմում: Ճիշտ է, այդ հարցազրույցում Վ. Դավթյանը երկար ներկայացնում է իր նորաստեղծ «Մոմիկ» պոեմը և ոչինչ չի ասում «Հիշատակարան անանուն գրչի» երկի վերաբերյալ: Հավանաբար 1985 թ. հունվարին այն դեռևս գրված չէր:

«Հիշատակարան» բառը՝ որպես ժանրային ձևի կամ պատումի եղանակի արտահայտություն, բավական տարածված է հայ նոր և նորագույն գրականության մեջ: Իբրև ամբողջ երկի վերնագիր, ենթավերնագիր կամ դրա մասի վերնագիր՝ այն հանդես է եկել, օրինակ, Միքայել Նալբանդյանի «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրական թերթերից 1858-1860», Րաֆֆու «Խաչագողի հիշատակարան», Ավետիք Իսահակյանի «Հիշատակարան», Նար-Դոսի «Ես և նա (Մի կորած մարդու հիշատակարանից)» երկերում, Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքի «Բղեի հիշատակարանը» գլխում և այլն:

Սակայն Վ. Դավթյանի պոեմում այդ բառն ունի բուն ժանրային նշանակություն: Բանաստեղծը հատուկ մտահղացումով գրել է պոեմ-հիշատակարան՝ նկատի ունենալով հայ միջնադարյան գրականության ամենից տարածված ժանրը՝ ձեռագիր մատյաններն արտագրողների կամ ընդօրինա-

<sup>1</sup> «Գրական թերթ», 18 հունվարի 1985:

<sup>2</sup> Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմող՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 69:

կողմերի, այն է՝ գրիչների կողմից գերազանցապես գրքի վերջում գրված հիշատակարանները:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները նախկինում ևս ուսումնասիրվել և տպագրվել են, բայց սկսած 1950 թվականից՝ այդ աշխատանքը համակարգված և հետևողականորեն իրականացրել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները: Այդ տարի լույս է տեսել «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» սովոր ժողովածուն, որի առաջաբանում այն տպագրության պատրաստած նշանավոր բանասեր Լևոն Խաչիկյանը գրում է. «Ձեռագրերի գրիչներն ու պատվիրատուները, կազմողներն ու նորոգողները, ընթերցողների հիշատակությանն արժանանալու ակնկալությամբ, ձեռագրերի վերջում և առանձին հատվածների ավարտից հետո թողել են սեղմ ու համառոտ հիշատակարաններ: Այդ հիշատակարաններում նրանք հայտնել են իրենց մասին որոշ կենսագրական տեղեկություններ, նկարագրել են ձեռագրերի գրչության, նորոգման կամ գնման հանգամանքները, հիշելով ժամանակի աշխարհիկ ու հոգևոր տերերին՝ ժամանակագրական տվյալներ են թողել նրանց մասին, և, շատ հաճախ, նկարագրել են իրենց ժամանակի պատմությունը՝ երկրի վիճակը, քաղաքական անցուղարձերը և այլն»<sup>1</sup>:

Ահա այդպիսի մի հիշատակարան է ներկայացնում Վ. Դավթյանի «Հիշատակարան անանուն գրչի» պոեմը, որը հատուկ ընծայականով ձևավորված է սփյուռքահայ բանաստեղծ և թարգմանիչ Կարիկ Պասամաճյանին (1947-1989):

Դիմելով դեռևս իր ասք-պոեմներից և հատկապես «Ասք սիրո և սրի» պոեմից հայտնի ժանրային ոճավորման եղանակին՝ Վ. Դավթյանը հմտորեն ոճավորել է միջնադարյան գրականության մի ժանրը և ստեղծել պոեմ-հիշատակարան: Ոճավորումն այստեղ բացարձակ է: Ո՛չ սկզբում, ո՛չ ընթացքում և ո՛չ էլ վերջում հեղինակն իր կողմից ոչ մի բառ չի նշում, քանզի ամբողջ պոեմը ձեռագրերի անանուն ընդօրինակողի խոսքն է: Հայտնի է, որ միջնադարյան հիշատակագիրների մուտքը սկիզբ էր առնում «փառատրական» խոսքով («Փառք»), որտեղ նրանք փառաբանում էին Աստծուն, սուրբ երրորդությանը, անում աստվածաբանական տարտամ դատողություններ, ապա մեծարանքի խոսքեր շոռայլում ձեռագրի պատվիրատուի կամ գնորդի մասին: Այդ ներածականներն այնքան կաղապարված կամ սնամեջ են, որ Մատենադարանի և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատողների կազմած տասնյակ ժողովածուներում դրանք սովորաբար հատուկ նշաններով բաց են թողնված: Վ. Դավթյանը նույնպես զանց է առել «փառատրական» մուտքը և հերոսի գրավոր մենախոսությունը սկսել ինքնանվաստացման հնչերանգ ունեցող տեղեկատվական մուտքով: Ամենատպա-

---

<sup>1</sup> Խաչիկյան Լ., Առաջաբան // ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ VII:

վորիչն այն է, որ գրչի արտագրած ձեռագիր մատյանը հայ մատենագրության ամենից նշանավոր և Վ. Դավթյանի համար անչափ սիրելի Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է.

Ես՝ նվաստ գրիչ, արեղա անբան,  
Ծաղկող անարվեստ, քերական անօգ,  
Սույն մատյանը սուրբ «Հայոց պատմության»  
Ավարտի բերի բյուր չարչարանք,  
Զի ժամանակս խիստ էր խռոված,  
Հայոց աշխարհը սասանյալ այնքան,  
Որ ես սրբաշեն իմ վանքը թողած,  
Դարձա թափառիկ ու հալածական:  
Եվ թե աստ սխալ գիր տեսնեք ու տող,  
Աղաչում եմ ձեզ՝ ինձ խիստ չդատել,  
Քանզի սրտիս մեջ միշտ ահ էր ու դող,  
Ու միշտ մեղանիս արցունք է կաթել<sup>1</sup>:

Անդրադառնալով հիշատակարանի ժանրի ամբողջական ոճավորմանը՝ չպետք է անտեսել գեղարվեստական պայմանականությունը և արվեստի ընդհանրացնող ուժը: Վ. Դավթյանը ոչ թե պատճենում է մեկ որոշակի սկզբնաղբյուր, այլ յուրացնում ժանրային նախատիպը իր ընդհանրության մեջ: Այդ առումով ամենից տպավորիչ լուծումը պոեմի հերոսին անանուն թողնելն է: Միջնադարյան ձեռագրերի հիշատագիրները հիմնականում նշում են իրենց անունները: «**Անանուն** գրիչ» կերպարաստեղծման սկզբունքով Վ. Դավթյանը նպատակ ունի կերտելու միջնադարյան գրչի ընդհանրական-հավաքական կերպարը:

Շատ կարևոր է նաև պատկերվող ժամանակաշրջանի խնդիրը: Հեղինակը, հասկանալի է, չի նշում որոշակի դար կամ թվական, թեև ցանկության դեպքում հիշատակարանի մի անկյունում կնշեր որևէ թվական, ինչպես երբեմն վարվում են իրական գրիչները: Բայց պոեմում կան ժամանակի նշաններ, որոնք ցույց են տալիս, որ հերոսը ականատեսի աչքերով, իբրև վկա և տուժած, պատմում է XIII կամ XIV դարերի իրադարձությունների մասին: Սույն պատումը հատկապես բնագրում մի քանի անգամ բառացի հիշատակվող «**նետողաց ազգի**» մասին է:

Ի դեպ, պոեմի ստեղծումից մի քանի տարի առաջ՝ 1980 թ., լույս էր տեսել ձեռագրերի հիշատակարաններին նվիրված առաջին՝ Հենրիկ Բախչինյանի պատմատեսական մենագրությունը<sup>2</sup>: Բնագրային վիթխարի նյութի քննությամբ հայտնի գրականագետը միջնադարյան հայ գրականության ժանրա-

<sup>1</sup> Դավթյան Վ., Անքնություն, Երևան, 1987, էջ 248 (այս գրքից կատարված հետագա մեջբերումների սկզբնաղբյուրը կտրվի շարադրանքում):

<sup>2</sup> Բախչինյան Հ. Գ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 1980:

յին համակարգում առանձին տեղ է հատկացնում հիշատակարանի ժանրին, ինչպես նաև համակարգում ժանրի ներքին հատկանիշներն ու բաղադրիչները: Մեկ այլ՝ «Ձեռագրերի հիշատակարաններ» հոդվածում Հ. Բախչինյանը նկատում է, որ «Բազմաթիվ հիշատակագիրներ փորձում են այս կամ այն կերպ տալ ժամանակաշրջանի պատկերը, հաճախ ներհյուսելով դրան իրենց անձնական տառապանքներն ու ապրումները: Այսպիսով, հիշատակարանի կառուցվածքի մեջ առանձին տեղ է գրավում **պատմական հատվածը**, որը որոշ հիշատակագիրների կողմից համարվել է հիշատակարանի կարևոր ու անհրաժեշտ բաղադրիչներից մեկը»<sup>1</sup>: Փոքր-ինչ ուշ՝ հիշատակարանների տիպերը նկարագրելիս, նա այս տեսակի հիշատակարանը համարում է առանձին ենթատեսակ. «Ժամանակագրական հիշատակարաններում ծավալված է հիշատակարանի պատմական հատվածը: Այդ կարգի հիշատակարանները ներկայացնում են պատմական մի խոշոր իրողության կամ մի ամբողջ ժամանակահատվածի նկարագրությունը»<sup>2</sup>:

Բոլոր նրբություններով հանդերձ՝ Վ. Դավթյանի «Հիշատակարան անանուն գրչի» ստեղծագործությունը նույնպես **ժամանակագրական հիշատակարան** է, որում ամենաձավալուն ու ծանրակշիռ մասը հենց **պատմական հատվածն է**:

Գրիչը պատմում է, որ իր վանքում հանգիստ արտագրում էր Քերթոդահոր գիրքը: Բելի դեմ կովոր Հայկը դեռ նետը չէր դրել աղեղին, երբ վանքի վրա հարձակվում է «հեծյալ նետողաց հեղեղը դեղին»: Վանականները փախչում են սարերը.

Սարերը ելանք... Նետողն այդ շեղաչ  
Լոկ սարերից է վախենում կարի... (249):

Մոնղոլների հանկարծակի հարձակման պահին գրիչը արագ փակում է մատյանը, և դեռ թաց մեկանը ապականվում է՝ աղավաղելով տառերը: Գրիչը ապաստան է գտնում լեռնային մի խոնավ, բայց ապահով անձավում և շարունակում գիրը: Այդտեղ նա Մարսու անունով կնոջ օգնությամբ շտկում է տառերը: Ձեռագրի վնասվելու և հարկադիր նորոգման մոտիվը միջնադարյան գրչության երևույթ է, որին այս դրվագով անդրադարձ է կատարում նաև Վ. Դավթյանը: Այդ առիթով նա օգտագործում է բնութագրական ու կոլորիտային երկու բառ՝ «օսլա» և «մեղան».

Մարսուն օժանդակ եղավ օսլայով,  
Եվ նորոգեցին էջն այդ աղարտված,  
Օձեցի նորից մեղանիս փայլով (249):

---

<sup>1</sup> **Բախչինյան Հ. Գ.**, Ձեռագրերի հիշատակարաններ // Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան, 1984, էջ 399:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 403:

Հետաքրքիր է, որ ձեռագրին քսված օւլայի մասին, ճիշտ է, լիովին տարբեր բովանդակությամբ, անդրադարձ կա հենց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մի ընդօրինակության հիշատակարանում: Դա Մաշտոցի անվան Մատենադարանի 1883 ձեռագիրն է: Գրիչը՝ Մովսի Սուրս գյուղի բնակիչ Կարապետը, 1639 թ. իր հիշատակարանում գրել է. «Ով սբ. ընթերցողք, անմեղադիր լերուք վասն անգրիլ տեղաներուն, զի արիւնակն հին էր ու ուլայ էր ձգած, և զուլէն ոչ էր գրած ւ այլ արիւնակ չի գտաք, որ գրէ[ի]. վա՛յ ինձ Ռ (1000) բերան»<sup>1</sup>:

Որպէս ժամանակագրական հիշատակարան՝ պոեմն անդրադառնում է նաև երկրի և հերոսների ներքին կյանքի իրողություններին: Դրանցից առաջնայինը գրչության համար ծանր, անբարենպաստ պայմաններն են, որոնց պատկերումը շատ տարածված մոտիվ է միջնադարյան հիշատակարաններում: Արտաքին թշնամու արշավանքներից բացի՝ խանգարիչ են նաև սոցիալական պայմանները: Փախստական գրչին ապաստան տված վանքի գերվանահայրը՝ Ուխտանեսը, հարկադրում է, որ նա ջրի լոբու և կոտեմի մարգերը, փայտ բերի անտառից, կթի այծերը: Յուրաքանչյուր նման հանձնարարությունից ընդհատվում ու հետաձգվում է գրչագրման աշխատանքը:

Մատյանը կիսատ չթողնելու մտահոգությամբ գրիչը գարնանը հեռանում է Ուխտանեսի վանքից և վերադառնում իր քարանձավը: Այս գործողությունները կատարվում են Արարատյան դաշտում: Մի անգամ էլ հերոսը, ավերակ ու անմարդաբնակ դարձած գյուղերը շրջելով, հասնում է մի խաղաղ վանք և շարունակում գրել: Հետաքրքիր է, որ ժամանակ առ ժամանակ հիշատակագիրը տեղեկացնում է, թե պատմահոր գրքի որ մասին է հասել: Չար Արտավազդին փակելուց հետո, երբ հասել էր Տիգրան Մեծին և ոգևորվել «հայոց արքայի վսեմ գործերով», որպէս զարհուրելի հակադրություն առժամանակ խաղաղված վանքի վրա գրոհում են «նետողները»:

Ճիչեր լսեցի ես զարհուրանքի,  
Նետողաց գորքը, իբրև մութ սելավ,  
Եկել, զարկում էր պատերին վանքի (255):

Վանքը ողողած մոնղոլները մողեսների նման մագլցում են վեր, պոկում զանգերի լեզվակները և տանում իրենց հետ: Մոնղոլ-թաթարների տիրապետության ժամանակաշրջանի այս պատկերներով, նրանց կոտորածների և ավարառության նկարագրությամբ պոեմը ձեռք է բերում ընդգծված պատմական գունավորում: Դրան նպաստում է հատկապէս «նետողաց» բառի ոչ հաճախադեպ, բայց դիպուկ գործածությունը: Մոնղոլ-թաթարներին բնութագրող այդ արտահայտիչ բառը բավական տարածված է եղել հատ-

---

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 763:

կապես XIII դարի մեր պատմագրության մեջ, իսկ այդ նույն դարաշրջանի պատմիչ Գրիգոր Ակնեբցու «Պատմութիւն ազգին նետողաց» գրքի պարագայում անգամ հայտնվել է երկի վերնագրում:

Բայց մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից առավել ուշագրավ է, որ «նետողաց» բառապատկերը օգտագործել են նաև ձեռագրերի հիշատակարանների հեղինակները: Օրինակ՝ «Պատմութիւն Վարդանայ Արևելցոյ» գրքի գրիչը (ի դեպ, անանուն) գրում է. «Ի ժամանակի, յորում էր թուականս մեր ՉԾԶ (1307), ի պակասել արդարութեանց և ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն և սաստկացաւ չարութիւն ազգին նետողաց ի վերա մեր՝ ազգիս քրիստոնէից»<sup>1</sup>:

Այս հանգույցում ծագում է առաջին հայացքից զարմանալի թվացող փաստական մի հակասություն: Բանն այն է, որ Հայաստանում մոնղոլ-թաթարների տիրապետությունը սկսվել է XIII դարի սկզբին և տևել մինչև XIV դարի կեսերը: Հետևաբար «նետողաց ազգի» հիշատակությունները կարող էին լինել առավելագույնը XIV դարի հիշատակարաններում: Իսկ այդ դարերում կամ ավելի վաղ ժամանակաշրջանում տեղի ունեցած՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի արտագրություններ գրեթե չեն պահպանվել: Քերթոզահոր գլխավոր մատյանի ընդօրինակությունները ավելի ուշ ժամանակաշրջանի են:

Ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը, որի կատարած արևելահայերեն թարգմանությունը առաջին անգամ հրատարակվել է 1940 թ., տալիս է Մովսես Խորենացու պատմության ձեռագրերի վաղեմության այսպիսի պատկեր. «Մեր ձեռքը հասել են Խորենացու Պատմության մեծ քանակությամբ ձեռագիրներ, որոնց թիվը հասնում է մինչև 48-ի: Սակայն սրանք բոլորը շատ նոր են, տասնևյոթերորդ դարից»<sup>2</sup>: Իսկ XVII դարի ձեռագրերի հիշատակարաններում «Նետողաց» ազգի մասին ոչինչ գրված չէ: Այդ արտահայտությունը, ինչպես տեսանք, կա XIV դարի հիշատակարաններում, որոնց մեջ չկա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ձեռագրի գեթ մեկ ընդօրինակություն և նրան կից հիշատակարան: Վ. Դավթյանը, որն ակնհայտորեն լավ է ուսումնասիրել այս ժանրի հիմունքները, հազիվ թե անտեղյակ լիներ նշված փաստերին: Հետևաբար նա իր ոճավորված հիշատակարանը գեղարվեստական հատուկ նպատակով է մի քանի դար հետ տարել: Ավելի ճիշտ՝ նա դիմել է իր պատմական պոեմներում հաճախ գործադրված անախրոնիզմի եղանակին, որի իմաստին առնչվող շատ լավ հեղինակային մի մեկնաբանություն տեղ է գտել նաև «Հիշատակարան անանուն գրչի» պոեմի ստեղծմանը անմիջապես նախորդած հայտնի հարցազրույցում. «Կա պատմական փաստ և կա պատմական ճշմարտություն ու պատմության

<sup>1</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46:

<sup>2</sup> **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 69:

ոգի... Այդ փաստերից օգտվող գրողը պիտի խորաթափանցություն ունենա պարզելու, թե այդ փաստերից ու նրանց տրված մեկնաբանություններից որն է համընկնում պատմական ճշմարտությանն ու ոգուն: Այլ խոսքով, պատմական թեմայով գրողը պիտի պատմաբանի ու բանասերի մանրակրկիտ աշխատանք կատարի, այդ աշխատանքին գումարելով իր ներքնատեսությունն ու ենթագիտակցությունը... Կարևորը պատմության ոգին նյարդերով, ամբողջ հոգով զգալն է»<sup>1</sup>:

Պատմական ճշմարտությանը վերահասու լինելու նպատակով Վ. Դավթյանը պոեմում անդրադառնում է նաև հայոց միջնադարը բնութագրող այլ երևույթների: Ոչ միայն գործին, այլև մարդու ֆիզիկական գոյությանը սպառնալիք է նաև ձեռագիր հիշատակարաններում բավական շատ հիշատակված մահ տարածամը՝ ժանտախտի համաճարակը: «Նետողաց» ազգի նոր արշավանքից հետո գրիչը հեռանում է վանքից և իջնում «գինեվետ գավառը Գողթան»: Այստեղ նրան դիմավորում է ժամանակի մյուս աղետը՝ ժանտախտը: Բայց զարհուրելին այն է, որ մատյանն ավարտելու սնեռումով գրիչը մտածում է, թե համաճարակի պատճառով «չի մտնի այստեղ ցեղը նետողաց», և ինքը, մի քանի ամիս Գողթնում մնալով, կգրի և կավարտի մատյանը, եթե չդառնա մահու ճարակ: «Հայոց պատմությունը» արտագրողին չի հաջողվում խուսափել վարակվելուց, բայց նրան հրաշքով հաջողվում է ապաքինվել և փրկվել՝ անընդհատ խմելով գինեվետ գավառի առատ գինին: Մահ տարածամի դաժան պատկերներով ևս անանուն գրչի հիշատակարանը հարազատ է միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններին:

Վ. Դավթյանի պոեզիային քաջածանոթ ընթերցողը գիտե, որ նրա պատմական պոեմները հազիվ թե շրջանցեն սիրո թեման, նույնիսկ եթե հերոսը հոգևորական է: «Հիշատակարան անանուն գրչի» ստեղծագործության արեղա հերոսի հոգեբանության մեջ և ճակատագրում զգալի դեր ունի սերը Սարսու անսովոր անունով կնոջ նկատմամբ: Աշխարհիկ այս մոտիվը կարծես թե բնորոշ չէ միջնադարյան հիշատակարաններին և ներկայացնում է նորագույն ժամանակների բանաստեղծի անհատական հղացումը: Սարսուն որբևայրի կին է, նա սովորաբար խոստովանանքի էր գալիս հիշատակագրի վանքը: Փախուստից հետո նա սարերում փնտրում է վանահորը, որ խոստովանի, բայց պատահամաբ գտնում է խոնավ քարայրում տենդի մեջ հայտնված հերոսին: Խնամում է նրան, փրկում մահից, ապա և օգնում, որ մատյանի փչացած էջը նորոգեն:

Սակայն Վ. Դավթյանը դեմ չի գնում հին ժամանակների ոգուն ոչ միայն ինքնին հիշատակագրի սիրո բերկրանքի պատկերմամբ, այլև հատկապես մեր պատմությանը և պատմագեղարվեստական գրականությանը շատ հարազատ մահվան մոտիվով: Գողթն գավառից գարնանը վերադառնալով

---

<sup>1</sup> «Գրական թերթ», 18 հունվարի 1985:



իր քարանձավը՝ գրիչը մի հովվից իմանում է, որ Սարսուն հեռացել է այս աշխարհից: Իր անձնական ապրումը ընդգծելու համար ներողություն խնդրելով ընթերցողներից՝ գրիչն իր հիշատակարանում ողբում է այդ դաժան կորուստը: Հետաքրքիր հղացմամբ այս անձնական ողբը գրվում է այն ժամանակ, երբ հիշատակագիրը արտագրում էր Մովսես Խորենացու պատմության վերջին մասը՝ ողբը: Երկու ողբերը խառնվում են միմյանց:

Վերջնամասի այս ողբասացությամբ անանուն գրչի հիշատակարանը նմանվում է միջնադարյան հիշատակարանների մասնագետի առանձնացրած **«ողբ-հիշատակարաններին»**, իսկ Սարսուի մահվան ողբով՝ նաև դամբանական հիշատակարաններին: «Կան նաև այնպիսի ողբ-հիշատակարաններ, որոնց մեջ հիշատակագիրները ողբում են իրենց անձնական վշտերը, իրենց հարազատների ու սիրելիների մահը: Սրանք դամբանական ողբ-հիշատակարաններ են, որոնք մեծ մասամբ լինում են չափածո և բնույթով մոտ են ժողովրդական մահերգերին ու մեռելաթաղի գանձերին»<sup>1</sup>, – գրում է Հ. Բախչինյանը:

Որքանո՞վ է նպատակահարմար, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» գրչագրողը հիշատակարանում գրի այդ գրքի մասին: Վ. Դավթյանի պոեմում, որ ժանրային ձևով զուտ հիշատակարան է, առնվազն մեկ տասնյակ հղում կամ անդրադարձ կա Մովսես Խորենացու գրքին, ինչպես նաև նրա պատմության դրվագների վերաշարադրանք կամ զուգահեռներ: Այս ամենը կարող էր լինել նաև զուտ բանաստեղծական երևակայության արդյունք: Բայց Վ. Դավթյանի գեղարվեստական այս քայլը նույնպես իր արմատներն ունի սկզբնաղբյուրներում: Բնական է, որ գրիչը հպարտանում է նրանով, որ ինքը ընդօրինակել է հենց մեր մատենագրության զուլխգործոցը: XVII դարի գրիչ Կարապետը, որին վկայակոչեցինք մեկ այլ առիթով, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» իր հիշատակարանում գրում է.

«Փառք..., որ կարողացոյց զիս, զթմբբեալս, ամենայն տեսակս մեղացանիշելի և գեղկելի, մեղսասէր և չարագործ **Կարապետ** սուտանուն ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց»<sup>2</sup>:

«Հիշատակարան անանուն գրչի» պոեմի ժանրային առանձնահատկությունների բնութագրման առումով շատ կարևոր հանգամանք է, որ միջնադարյան ձեռագրերի հիշատակարանները լինում էին և՛ արձակ, և՛ չափածո: Պոեմը բնականաբար չափածո է, ու թեև Վ. Դավթյանը զգալի չափով օգտվել է նաև արձակ հիշատակարանների գեղարվեստական միջոցներից, բայց բուն ժանրային նկարագրով առավել սերտորեն կապված է հենց **չափածո հիշատակարանների** հետ:

Ժանրային ավանդույթի տեսանկյունից հետաքրքիր փաստ է, որ դեռևս

<sup>1</sup> **Բախչինյան Հ. Գ.**, Ձեռագրերի հիշատակարաններ, էջ 404:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), էջ 763:

միջնադարում մեր բանաստեղծները գրել են հիշատակարանների նմանողությամբ ձևավորված չափածո գործեր: Դրանցից առավել նշանակալիցը XIV-XV դարերի մատենագիր Գրիգոր Խլաթեցի Ծերենցի մի չափածո երկն է, որ վերնագրում իսկ պարունակում է կողմնորոշում դեպի հիշատակարանի ժանրը: Նրա այդ գործը, որը փաստորեն պոեմի մի տարատեսակ է, «Յիշատակարան աղետից» խորագրով, 1897 թ. Վաղարշապատում հրատարակել է ակնանավոր բանասեր Գրիգոր Խալաթյանը՝ նախ «Արարատ» հանդեսում<sup>1</sup>, այնուհետև առանձին գրքույկով<sup>2</sup>: Վ. Դավթյանի պոեմը այս ստեղծագործության հետ ունի ակնհայտ հարազատություն: Ծավալվելու շատ հնարավորություն չունենալով՝ նշենք միայն, որ «Հիշատակարան անանուն գրչի» պոեմը շարադրանքի ձևով և բովանդակությամբ նույնպես կարող էր կոչվել «Յիշատակարան աղետից»: Հետաքրքիր է նաև, որ Եղիշե Չարենցը իր կյանքի վերջում Գրիգոր Խլաթեցի Ծերենցի կյանքը և ստեղծագործությունը վերարտադրող պոեմ է գրել: «... Երբ բարձրանում էր նա վեր» պայմանական վերնագրով հայտնի այդ պոեմը մի տեսակ կապող օղակ է միջնադարյան չափածո հիշատակարանների և Վ. Դավթյանի պոեմ-հիշատակարանի միջև:

Այն, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկն իր զգացմունքայնությամբ, խոսքի ռիթմով, ներդիր չափածո հատվածներով կարող էր արտագրող գրչին հնարավորություն ընձեռել հիշատակարանը գրելու չափածո՝ ինքնին տրամաբանական է: Այդ գեղարվեստորեն պատահել է «Հիշատակարան անանուն գրչի» պոեմում: Գիտե՞՞ր արդյոք Վ. Դավթյանը, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» իրական ընդօրինակող-արտագրող գրիչների հիշատակարաններում կան նաև չափածո գրվածներ: Ամենայն հավանականությամբ՝ այո: Համենայն դեպս, այդպիսիք իրոք կան: Դրանցից մեկը մեջբերված է Մ. Աբեղյանի ու Ս. Հարությունյանի պատրաստած և 1913 թ. Թիֆլիսում լույս տեսած քննական հրատարակության առաջաբանում: Դա նոտրագրով միայուն գրված մի մեծ գիրք է, որի մեջ արտագրված են երեք պատմիչների՝ Մովսես Խորենացու, Ստեփանոս Ասողիկի և Արիստակես Լաստիվերցու պատմությունները: Ահա գրիչ Գրիգորի չափածո հիշատակարանի՝ Մովսես Խորենացուն վերաբերող հատվածը.

Յորոց և մի հայկազնէին  
 Մովսէս քերթօղն Խորենացին,  
 Ճըշգրտախօս վիպասանին,  
 Յոլով ամաց մատենագրին,  
 Եռահատոր շարադրողին...<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս «Արարատ», 1897, թիվ Դ, էջ 174-182:

<sup>2</sup> «Յիշատակարան աղետից» Գրիգորի Խլաթեցույ. Պատմական վիպասանութիւն, հրատարակեց Խալաթեան Գրիգոր, Վաղարշապատ, 1897:

<sup>3</sup> **Մովսիսի Խորենացույ** Պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1913, էջ ԺԸ:

Ինչպես ընդունված է միջնադարյան հիշատակարաններում, Վ. Դավթյանի «Հիշատակարան անանուն գրչի» պոեմը ավարտվում է ընթերցողին հղված կտակ-հանձնարարությունների բնույթ ունեցող վերջաբանով.

Արդ, աղաչում եմ նաև ծնրադիր,  
Ես՝ նվաստ գրիչ, քերական անօգ,  
Լավ պահպանեցեք մատյանս ընտիր,  
Քանզի գրել եմ բյուր չարչարանոք (259):

Այս գրիչը հորդորում է, ի սեր պատմահոր և հավատի, կարդալիս գիրքը հեռու պահել մոմից, մագաղաթին չդիպչել յուղոտ մատներով, օգտագործելուց հետո այն ծածկել կտորով: Կտակի վերջին հատվածը ամբողջ պոեմի ամենահուզիչ և պատկերավոր մասերից մեկն է.

Այնպես պահպանե՛ք, որ մատյանս սուրբ  
Անհավատներին չդառնա գերի:  
Իսկ եթե դառնա, աղաչում եմ ձեզ,  
Դուք չխնայեք ոչ մի փրկագին,  
Փրկեցեք նրան, փրկեցեք այնպես,  
Ասես փրկում եք ձեր իսկ զավակին:  
Եվ աղաչում եմ դարձյալ ու դարձյալ,  
Վատ գրիս համար ինձ խիստ չդատել,  
Զի ժամանակս խիստ էր սասանյալ,  
Ու միշտ մելանիս արցունք է կաթել... (259):

Այս խրատական վերջաբանում նշված բոլոր հանձնարարականներն ու հորդորները միջնադարյան հիշատակարաններում հանդիպող ժանրային միավորներ են:

Միջնադարյան հոգևոր մշակույթի բանաստեղծականացման ծիրում Վ. Դավթյանը գրել և «Անքնություն» ժողովածուում գետեղել է XIII-XIV դարերի հայտնի արվեստագետին նվիրված «Մոմիկ» պոեմը, որը 1985 թ. սկզբին արդեն պատրաստ է եղել: Այդ ժամանակ տված հայտնի հարցազրույցում Վ. Դավթյանը փաստում է. «Գրել եմ նաև «Մոմիկ» վերնագրով մի պոեմ, որ, ինչպես վերնագրից կոսահում եք, մեր միջնադարի ճարտարապետ, քանդակագործ, ծաղկող Մոմիկի մասին է, մի զարմանալի անձնավորության, որի համար աշխատանքը կեցության միակ ձևն է եղել»<sup>1</sup>:

Մոմիկը միջնադարյան ձեռագրեր արտագրող գրիչ է, հիշատակարաններում երբեմն նշվում է նաև որպես ծաղկող: Իսկ ահա մատենագրական հիշատակություններ նրա մասին չեն պահպանվել: Հավանաբար այս է պատճառը, որ Վայոց ձորում ծնված և ստեղծագործած այս նուրբ ու տա-

<sup>1</sup> «Գրական թերթ», 18 հունվարի 1985:

ղանդավոր արվեստագետի անձը պատվել է մի տեսակ առասպելական մշուշով: Նրա մասին հորինվել են ժողովրդական գրույցներ և ավանդություններ (նման մի ավանդություն «Ավանդապատում» գրքում մեջբերում և մեկնաբանում է Արամ Ղանալանյանը՝ նշելով, որ դեպքը տեղի է ունեցել Նորավանքում)<sup>1</sup>:

Ըստ երևույթին, չունենալով Մումիկին վերաբերող անհրաժեշտ քանակով փաստեր՝ իր սիրած եղանակներով դրանք խաղարկելու և բանահյուսելու համար, Վ. Դավթյանը նույնպես տարվում է ավանդագրույցներով:

Հենց այդպիսի գրույցներում մատնանշված հանճարը, հոգեկան մեծ ուժը և ողբերգականությունն են գրավում Վ. Դավթյանին: Հարցագրույցում նա առանց սկզբնաղբյուրը մատնանշելու պատմում է Մումիկին վերաբերող մեկ այլ գրույց՝ հասկացնելով, որ հենց դա է ընկած նորաստեղծ «Մումիկ» պոեմի ստեղծագործական պատմության հիմքում. «Վերևում ասացի, որ պոեմ եմ գրել Մումիկի մասին: Ինչը ինձ ոգևորեց և դրդեց գրելու այդ գործը: Կարդալով Մումիկի մասին, իմացա, որ շատ աշխատելուց, մատյանների վրա գիշեր ու զօր թեքվելուց կուրացել է, բայց և բուժվել: Կուրացել է նկարիչը, քանդակագործը, ճարտարապետը: Դա նրա համար ստույգ մահ է եղել, հոգեկան մահ: Կուրությունն այժմ էլ դժվար է բուժվում, ինչպես է Մումիկը կարողացել միջնադարում բուժվել... Հրաշք չէ՞ արդո՞ք: Ուրեմն այստեղ գործել է այլ մի ուժ, ներշնչանքի, երազանքի ուժը, ապրելու ու հարատևելու կամքը: Այդ փոքրիկ թվացող փաստը ինձ համար ստացել է խորհրդանշական իմաստ. դրա մեջ ես ցանկացել եմ տեսնել մեր ժողովրդի գոյատևման գաղտնիքներից մեկը»<sup>2</sup>:

Վ. Դավթյանի այս արձակ պարզաբանումը կարդացող ընթերցողին կարող է թվալ, թե նա պոեմում գեղարվեստորեն պատմել է հենց հրաշապատում թվացող այս դեպքը: Իհարկե, պոեմում այդ մոտիվը կա, բայց որպես մասնակի մի շերտ կամ մի դրվագ: Առանցքային պատկերը այստեղ խաչքար տաշող Մումիկի նկարագրությունն է, իսկ կուրանալու դաժան պատմությունն ընկած է պոեմի միջնամասում: Իսկ մինչ այդ պատկերվում են Մումիկի կյանքի, գործի և էության մի քանի այլ կողմեր:

Հայտնի է, որ բազմահանճար նշանավոր արվեստագետը իր գրեթե ամբողջ կյանքը ապրել է Վայոց աշխարհում՝ հենց «նետողաց ցեղի» մոնղոլթաթարների տիրապետության ժամանակաշրջանում, որը տեսանք նաև «Հիշատակարան անանուն գրչի» պոեմում:

«Մումիկ» պոեմը սկսվում և ավարտվում է խիստ բնորոշ մի պատկերով: Աշնանային խաղաղ մի օր քարափին նստած քանդակագործը, մուրճը ձեռքին, խաչքար է փորագրում, և այդ պահին նրա առջև հայտնվում է նեղաչ նեռը՝ մոնղոլը.

<sup>1</sup> Ղանալանյան Ա. Տ., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 228:

<sup>2</sup> Նույն տեղում:

...Ճեղքեր են աչքերը նեռի,  
Ճեղքեր են ու չունեն բիբեր,  
Մումիկի խոշոր աչքերին  
Հայրենի արևն է դիպել:  
Կանգնել են, նայում են ահեղ,  
Կանգնել են քարափի ծերին,  
Մոնղոլը կեռ սուր է պահել,  
Ու մուրճ է Մումիկի ձեռքին... (237):

Մոնղոլի նեղ ու Մումիկի խոշոր աչքերի, մեկի ձեռքի սրի ու մյուսի մուրճի հակադրությամբ հասկանալիորեն այս դրվագը դեռ կրկնվելու է պոեմի վերջում, երբ կկայանա նրանց հակամարտության հանգուցալուծումը: Իսկ մինչ այդ նախ տրվում է Նորավանքի ձորի խորհրդավոր բնապատկերը: Կիլիկիային վերաբերող հատվածում մոնղոլի դրվագից հետո ևս մեկ անգամ ընդգծվում է Մումիկ արվեստագետի ազգային էությունը: Այնտեղ հերոսը զգացել է մեր բերդի հիմքերը փորող «Լատինաց ժպիտը շողում» և հայ իշխաններին մեղադրում է երկրի սրտից հեռանալու համար:

Պոեմի միջնամասում տրվում է կուրանալու պատմությունը՝ որպես բարդ և առեղծվածային էություն ունեցող մարդու և արվեստագետի ճակատագրի ծանր մի դրվագ: Մի օր քարից խաչքար փորագրելիս քանդակագործի առջև հայտնվում է Շողեր անունով սևավոր այրին, որին նա տեսել էր Գլաձորում, ուր ուխտի էր եկել: Մումիկը հնայվում է նրանով, մի օր կտրում է ճամփան, և այդպես ծնվում է սերը:

Կինը և սերը, որոնք Վ. Դավթյանի գրեթե բոլոր պոեմներում վճռորոշ ու կենտրոնական են, ճակատագրական դեր են ունենում նաև Մումիկի համար: Անանուն գրչի նման Մումիկը դարձյալ այրի կնոջ հետ ապրում է սիրո և կրքի պահեր: Միջնադարյան սիրերգերի ոգով պատկերվում են Շողերի շարե շապիկը (նկատելի է նաև նարեկացիական բաղաձայնայնությունը), լուսնյակի նմանվող կուրծքը, հայրենիներին բնորոշ կանացի հումորը. «-Մումիկ չես, այլ կրակ ու բոց»: Միրելի կինը վերականգնում է նկուն արվեստագետի ինքնավստահությունը, հոգու լույսը, շուտով՝ նաև աչքերի լույսը:

Մի օր, երբ Մումիկը ուզում է նայել արևի շողերին, բոլորովին անսպասելի արևը խավարում է աչքերի դեմ: Ի տարբերություն հարցազրույցի, որտեղ չի նշվում Մումիկի կուրությունը բուժելու միջոցը, պոեմում դա բացատրվում է կնոջ սիրով և աղոթքով.

Զգացի բնագործ վերին  
Ու տեսա աչքերով իմ կույր,  
Որ դիպան իմ փակ կոպերին  
Շողերի մատները մաքուր...  
Շոյում էր, շշնջում.  
- Իմ խեղճ,

Իմ տանջված, իմ խաչված Մոմիկ,  
Քեզ համար աղոթել անվերջ,  
Մարմինս մատնել եմ ծովի,  
Քեզ համար դեղ ու ճար արել,  
Բերել եմ, քսեմ աչքերիդ... (242-243):

Մոմիկի կուրացման պատմությանը Վ. Դավթյանը տեղեկացել է դարձյալ միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններից, ավելի ստույգ՝ հենց գրիչ և ծաղկող Մոմիկի մի հիշատակարանից: 1331 թ. իր արտագրած Ավետարանի ձեռագրի հիշատակարանում Մոմիկը վկայում է, որ 1307 թ. իր տեսողությունը վատացել է, և ինքը չի կարողացել ավարտել Ավետարանը: Ահա այդ հիշատակարանը. «Յուսովն որ առ Յիսուս զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թուիս 22 (1331), եւ զհիշատակարանս արարի եւ գրեցի հրամանաւ տէր Տարսայիճին մականուն տէր Ստեփանոսի որդւոյ Ջալալին: Որ հրամանաւ եւ արդեամբք մեծ պարոնին Բուրթէլին յայս ամի զարդարեաց զԱւետարանս ոսկով եւ արծաթով ի մայրաքաղաքիս յԵղեզիս, ի նորավանս, զոր իւրով ի նոր շինեալ եկեղեցի կատարեաց՝ յանուն Սրբուհւոյ Աստուածածնին եւ Սրբոյն Նիկոյաղոսի եւ Քրիստափորոյ Սրբոյ»<sup>1</sup>:

Հաջորդող հիշատակարանի վերջում Ստեփանոսը, գրում է. «Մեղուցեալ գրչիս՝ Մոմկայ, աշխատողի ի սմայ ողորմեսցի Քրիստոս եւ վարձս բարեաց հատուցել նմայ»<sup>2</sup>:

Գրիչ Մոմիկի հիշատակարանը, իր կուրանալուն վերաբերող վկայութեամբ հանդերձ, նախապէս տպագրել և մեկնաբանել է հայտնի պատմաբան և բանասէր Հարություն Քյուրդյանը. «Պատմական տեսակետով շատ հետաքրքրական է այս ձեռագիրն ու հիշատակարանը: Գրիչը Մոմիկ, երբ դեռ սարկավագ էր 1292-ին Սյունյաց Վայոց ձորի Նորավանքին մեջ՝ կը գրեր Էջմիածնի թիվ 2848 Ավետարանը: Վերի Ավետարանը 1307-ին կը գրէ և միայն հիշատակարանը 1331-ին կավելցնէ: 1307-ի Ավետարանին գրչության միջոցին աչքերուն տկարության պատճառով կը դադրեցնէ աշխատանքը, որ կը շարունակվի Հոհաննես գրչէ և կը ծաղկվի ԹՈՐՈՍԵ, որ մեր Տարոնեցին է»<sup>3</sup>: Տողատակի ծանոթության մեջ հեղինակը Մոմիկի մասին նաև գրում է. «Որ ծաղկող ալ է ու կը ցանկար այս ձեռագիրն ալ իր ձեռքով ծաղկել»<sup>4</sup>:

Այսպիսով՝ Մոմիկը նաև գրիչ է ու ծաղկող, բայց պոեմում առավելապես ներկայացված է որպէս քանդակագործ կամ խաչքարի վարպետ: Ի տարբերություն նախորդ պոեմի՝ Վ. Դավթյանն այստեղ ռճավորում չի անում, այլ հիշատակարանից քաղում է միայն փաստը և մեկնաբանում դիպաշարի մեջ:

---

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԴ դար, մասն Բ (1326-1350 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2020, էջ 100:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Քյուրդյան Հ., Դարձյալ Թորոս Տարոնեցի // «Բազմավեպ», 1947, թիվ 9-10, էջ 217:

<sup>4</sup> Նույն տեղում:

Վ. Դավթյանը լեգենդային լուծում է տալիս ոչ միայն Մոմիկի կուրության թեմային, այլև նրա վրա հարձակվել պատրաստվող հեծյալ մոնոլի մոտիվին: Պոեմի վերջնամասում նա քանիերորդ անգամ կրկնում է մուտքում ներկայացված իրադրությունը՝ այս անգամ մեջտեղ բերելով դարձյալ հիշատակարաններից քաղված «նետողաց ցեղ» բառակապակցությունը.

Աշուն է, որ շեկ է ու թեժ,  
Մի կարմիր-կապուտակ աշուն,  
Մոմիկը քարափին նստել,  
Իր համար խաչքար է տաշում:  
Բայց հանկարծ ծուխ եղավ ու կայծ,  
Քարափը երերաց տեղից,  
Քարափին ծառացավ հանկարծ  
Հեծյալ մի նետողաց ցեղից... (243-244):

Եվ մինչդեռ բանաստեղծը երկու անգամ կրկնում է պոեմը բացող ութ տողերը, նկարագրում մահվան շեմին կանգնած խոնարհ արվեստագետին, նրա դիմումներն Աստծուն, կատարվում է հրաշքը: Նեղաչք մոնոլոլը նայում է խաչքարին, ինչ-որ հզոր լույսեր են արձակվում խաչքարից և մթագնում մոնոլոլի աչքերը: Ուզում է բարձրացնել սուրը, որ հարվածի Մոմիկին, բայց ձեռքը չի բարձրանում: Ապշահար ու կախարդված թշնամին իր եկած ճամփով պանում է հետ:

Վ. Դավթյանի «Մոմիկ» պոեմը միջնադարյան Հայաստանի մշակութային նշանավոր գործչի կյանքի և ստեղծագործության մի քանի կողմերը բանաստեղծականացնելու հետաքրքիր փորձ է: Այն «Հիշատակարան անանուն գրչի» պոեմի հետ շարունակում և լրացնում է «Զվարթնոց», «Թոնդրակեցիներ» և Վ. Դավթյանի այլ գործերում արտահայտված «միջնադարականության» պատմամշակութային գիծը: Այդ նպատակին հասնելու համար բանաստեղծը ուսումնասիրել և վարպետորեն օգտագործել է միջնադարյան ձեռագրերի հիշատակարանները: «Հիշատակարան անանուն գրչի» պոեմում կատարվել է հիշատակարանի ժանրի լիակատար ոճավորում, իսկ «Մոմիկ» պոեմում մասնակի կիրառություն:

### **Սեյրան Գրիգորյան – Հիշատակարանի ժանրը Վահագն Դավթյանի պոեմների պոետիկայում**

XX դարի երկրորդ կեսի հայ նշանավոր բանաստեղծ Վահագն Դավթյանը իր պոեմներում հաճախ էր օգտագործում հայ միջնադարյան գրականության ժանրերը: 1980-ական թթ. նա գրել է երկու պոեմ, որոնց մեջ յուրացրել է հայերեն հնագույն ձեռագրերի հիշատակարանների կառուցվածքը: «Հիշատակարան անանուն գրչի» պոեմը ամբողջովին գրված է որպես հիշատակարանի ժանրային ոճավորում: Հայ միջնադարյան գրիչը Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի իր արտագրած ձեռագրի վերջում գրում է դրա հիշատակարանը: Պոեմում պատկերված են

XIII-XIV դարերի իրադարձությունները, հատկապես մոնղոլների արշավանքները, որոնք հաճախ են հանդիպում միջնադարյան հիշատակարաններում: Վ. Դավթյանը ստեղծել է չափածո հիշատակարան, բայց օգտագործել է նաև արձակ հիշատակարանները: Մյուս պոեմում, որ վերնագրված է «Մոմիկ», որպես միջնադարյան հայտնի գրչագրող, նկարիչ և ճարտարապետ Մոմիկի կուրանալու պատմության սկզբնաղբյուր օգտագործված է հենց նրա գրած հիշատակարանը:

### **Сейран Григорян – Жанр колофона в поэтике поэм Ваагна Давтяна**

*Ключевые слова – Ваагн Давтян, Мовсес Хоренаци, Момик, колофон, поэма, писец, средние века, стилизация, нация лучников, рукопись*

Выдающийся армянский поэт второй половины XX века Ваагн Давтян в своих поэмах часто использовал жанры армянской средневековой литературы. В 1980-х годах он написал две поэмы, в которых использовал структуру колофона древних армянских рукописей. Поэма «Колофон безымянного писца» полностью написана как жанровая стилизация колофона. Армянский средневековый писец в конце репродукции рукописи книги Мовсеса Хоренаци «История Армении» пишет колофон своей рукописи. В поэме изображены события XIII-XIV веков, в частности, нашествия монголов, о которых часто упоминается в средневековых колофонах. В. Давтян создал ритмический колофон, но также использовал и прозаические колофоны. В другой своей поэме, которая называется «Момик», в качестве источника о слепоте знаменитого армянского средневекового писца, художника и архитектора использован колофон самого Момика.

### **Seyran Grigoryan – The Genre of Colophon in the Poetics of Vahagn Davtyan’s Poems**

*Key Words – Vahagn Davtyan, Movses Khorenatsi, Momik, colophon, poem, scribe, middle ages, stylization, nation of archers, manuscript*

The famous Armenian poet of the second half of the XX century Vahagn Davtyan often used the genres of medieval Armenian literature in his poems. In the 1980s he wrote two poems in which he adopted the structure of colophons of Armenian ancient manuscripts. The poem “Colophon of the Nameless Scribe” is written entirely in the stylistic genre of colophon. The medieval Armenian scribe wrote the colophon of the “History of Armenia” by Movses Khorenatsi at the end of his reproduction of the manuscript. The poem depicts the events of the XIII-XIV centuries, especially the Mongol invasions, which are often found in medieval colophons. V. Davtyan wrote the colophon in verse, but he used prosaic colophons as sources as well. In the next poem – “Momik”, telling the story of Momik’s sudden blindness, the colophon written by the famous medieval scribe, artist, and architect Momik himself is used as a source.

**Սեյրան Գրիգորյան – ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (sgrigoryan@ysu.am)**

Ներկայացվել է 03.09.2021

Գրախոսվել է 24.06. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021